

«Բեստ Քարդ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Մարինե Դալլաքյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա և հանդիսանում է ծրագրի Կազմակերպիչ, Bari Card ապրանքային նշանով, այսուհետ՝ Ծրագիր, մի կողմից, և Մասնակիցը (ըստ սույն հրապարակային պայմանագրով սահմանված կանոնների) կնքում են Ծրագրին մասնակցության պայմանագիր՝ համաձայն ներքոնշյալ Պայմանների:

Սահմանումներ և հասկացություններ

Ծրագրի Կազմակերպիչ՝ «Բեստ Քարդ» ՍՊԸ (այսուհետ՝ **Կազմակերպիչ**), որն իրականացնում է Բարի ծրագրի կազմակերպումն ու կառավարումը՝ համաձայն սույն հրապարակային պայմանների (այսուհետ՝ **Պայմաններ**):

Պայմաններ՝ սույն հրապարակային պայմանները, որոնց համապատասխան իրականացվում է Բարի ծրագրի կազմակերպումն ու կառավարումը:

Բանկ՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, ով թողարկում և Մասնակցին է տրամադրում վճարային քարտեր (ներառյալ՝ Bari Card MasterCard), որոնք սույն Պայմանների համաձայն մասնակցում են Բարի Ծրագրին:

Բարի ծրագիր՝ Կազմակերպչի կողմից իրականացվող Ծրագիր, որի շրջանակներում Մասնակցին ստանում է հետվճար Գործընկերների մոտ կատարած գնումների դիմաց՝ նախապես հայտարարված չափով և ժամկետներում: Ծրագրի շրջանակներում Մասնակիցը մասնակցում է նաև Կազմակերպչի հայտարարած ակցիաներին, որոնց շրջանակներում կարող է ստանալ խրախուսական պարգևներ:

Bari Card (Բարի քարտ)՝ Բանկի և Կազմակերպչի կողմից թողարկվող, Bari Card ապրանքային նշանը կրող համատեղ վճարային քարտ, որը Մասնակցին իրավունք է տալիս մասնակցելու Ծրագրին և ստանալ հետվճար և/կամ խրախուսական պարգև՝ համաձայն սույն Պայմանների: Bari Card ապրանքային նշանը հանդիսանում է «Բեստ Քարդ» ՍՊԸ-ի սեփականությունը, իսկ Bari Card MasterCard վճարային քարտերը՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի սեփականությունը:

Այլ վճարային քարտեր՝ Բանկի կողմից արդեն թողարկված և գործող և հետագայում թողարկվելիք քարտեր, որոնց վրա տարածվում է Բարի ծրագրի դրույթները, և որոնցով Գործընկերների մոտ կատարած անկանխիկ վճարումների դիմաց Մասնակցին տրամադրվում է հետվճար՝ համաձայն սույն մասնակցության Պայմանների: Քարտերի թողարկման, օգտագործման և սպասարկման պայմանները և կանոնները սահմանվում են Բանկի կողմից, իսկ Ծրագրին մասնակցության պայմանները՝ Կազմակերպչի կողմից:

Հետվճար/Cashback` Bari Card–ով և բանկի այլ վճարային քարտերով Գործընկերների մոտ կատարած գնումների որոշակի տոկոսի վերադարձ Մասնակցին, որի չափը սահմանվում է Կազմակերպչի և Գործընկերների միջև կնքված համագործակցության պայմանագրերի հիման վրա:

Մասնակից` ֆիզիկական անձ, ով հանդիսանում է Bari Card-ի կամ Բանկի այլ վճարային քարտի քարտապան, ով ընդունել/ակցեպտավորել է սույն մասնակցության Պայմանները:

Գործընկեր` իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ով Ծրագրի շրջանակներում համագործակցում են Կազմակերպչի հետ և ուն առևտրի և/կամ սպասարկման կետերում իրականացրած անկանխիկ գործարքներից (այդ թվում առցանց) Մասնակիցը Պայմանների համաձայն ստանում է հետվճար և խրախուսական պարգևներ: Գործընկերների ցանկը հրապարակված է Կազմակերպչի պաշտոնական կայքէջում www.baricard.am:

Խրախուսական պարգև` ապրանքներ (գույքային իրավունք կամ այլ շահ), որոնք Մասնակիցը կարող է ստանալ Ծրագրի շրջանակներում` համաձայն սույն Մասնակցության Պայմանների:

Ակցիաներ` Կազմակերպչի կողմից հայտարարվող և իրականացվող միջոցառումների ամբողջություն, որոնց շրջանակներում Մասնակիցները կարող են ստանալ խրախուսական պարգևներ:

Կազմակերպչի կայք էջ` համացանցում Կազմակերպչի պաշտոնական կայքէջ հետևյալ հասցեով` www.baricard.am:

Բանկի կայքէջ` «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջ հետևյալ հասցեով` www.vtb.am:

Մասնակցության պայմաններ (այսուհետ Պայմաններ)` սույն փաստաթուղթը, որը Ծրագրի իրականացման շրջանակներում հրապարակված է Կազմակերպչի կայքէջում և ուղղված է 16 տարին լրացած Մասնակից ֆիզիկական անձանց: Ծրագրի Մասնակից դառնալն անվճար է և գործում է ՀՀ տարածքում: Քարտի սպասարկման համար գանձվում է սպասարկման վարձ` անսական կտրվածքով, համաձայն Բանկի կողմից սահմանված սակագների:

Ակցեպտավորում` Մասնակցի կողմից սույն Պայմանների ընդունում և համաձայնության տրամադրում` հաստատելով, որ նախապես ծանոթացել և ընդունել է դրանք:

Բարի ծրագիր և Բանկ փոխգործակցություն

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն թողարկում է Bari Card MasterCard վճարային քարտերը: «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն «Բեստ Քարդ» ՍՊԸ-ի կողմից տրվող վճարման հանձնարարականի հիման վրա քարտապանների քարտային հաշիվներին իրականացնում է հետվճար (cashback)` Bari Card MasterCard վճարային քարտերով, ինչպես նաև Բանկի կողմից արդեն թողարկված այլ վճարային քարտերով կատարված գործարքներից` նախապես սահմանված

չափերով, որոնց մասին տեղեկատվությունը տեղադրված է www.baricard.am և www.vtb.am պաշտոնական կայքէջերում: Bari Card MasterCard վճարային քարտերով իրականացված գործարքների արդյունքում ստացված հետվճարների մասին տեղեկատվությունը Ծրագրի Մասնակիցը կարող է ստանալ՝ գրանցվելով www.baricard.am կայքի անձնական էջում: Իսկ Բանկի այլ վճարային քարտերով իրականացված գործարքների արդյունքում ստացված հետվճարի մասին տեղեկատվությունը Մասնակիցը կարող է ստանալ Բանկի կողմից սահմանված տարբերակով:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 1.1. Սույն Պայմանները հանդիսանում են հրապարակային առաջարկ (օֆերտա), որը համարվում է Մասնակցի կողմից ընդունված (ակցեպտավորված)
 - 1.1.1 Բանկի կողմից սահմանված կարգով վճարային քարտի հայտը ներկայացնելու պահից:
 - 1.1.2 Ծրագրին մասնակցության վերաբերյալ համապատասխան դրույթ պարունակող Բանկի այլ վճարային քարտերի սպասարկման պայմանները և օգտագործման կանոններն ընդունելու մասին Մասնակցի հաստատումը Բանկի համար ընդունելի եղանակով տրամադրելու/ակցեպտավորելու պահից:
- 1.2. Սույն Պայմանները գործում են ՀՀ և ԼՂՀ տարածքներում Ծրագրի իրականացման ողջ ժամանակահատվածի ընթացքում:
- 1.3. Սույն Պայմանները պարտադիր են ինչպես Մասնակցի, այնպես էլ Կազմակերպչի համար: Մինչ Պայմանագիր կնքելը՝ ակցեպտավորելը, Ծրագրի մասնակիցը պետք է ծանոթանա Պայմանների հետ և անհամաձայնության դեպքում հրաժարվի մասնակցությունից: Այլ դեպքում, Մասնակիցն իրավունք չունի հիմնվելու իր անիրազեկության վրա, եթե ստացել է քարտը և իրականացրել անկանխիկ գործարքներ, որի արդյունքում պետք է ստանա հետվճար:
- 1.4. Սույն Պայմանները միակողմանիորեն կարող են փոփոխվել Կազմակերպչի կողմից, որոնց մասին տեղեկատվությունը հասանելի է Կազմակերպչի և Բանկի պաշտոնական կայքէջերում: Պայմանների ցանկացած փոփոխություն Կազմակերպիչը Մասնակցին ծանուցում է դրանք ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 10 (տասն) օր առաջ՝ Կազմակերպչի կայքէջում դրանք հասանելի դարձնելու ճանապարհով: Եթե մինչ պայմանների փոփոխությունն ուժի մեջ մտնելը Մասնակիցը գրավոր չի տեղեկացնում Կազմակերպչին կամ Բանկին Պայմանների ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունները դադարեցնելու իր ցանկության մասին և փոփոխություններից հետո իրականացվում է Քարտով ցանկացած գործարք, ապա փոփոխությունները համարվում են ընդունված (ակցեպտավորված) Մասնակցի կողմից:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1. Ծրագրի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (Գործընկերների ցանկ, հատուկ առաջարկներ, ակցիաներ, հետվճարի չափ և այլն) Մասնակիցը կարող է ստանալ Կազմակերպչի պաշտոնական կայքէջից: Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի, առանց Մասնակցին նախապես տեղյակ պահելու փոխել Գործընկերների ցանկը, Գործընկերոջ կողմից տրամադրվող Հետվճարի չափը ու վճարման կարգը: Կազմակերպիչը պարտավորվում է սույն կետում նշված տեղեկությունների մասով ցանկացած փոփոխության վերաբերյալ

տեղեկատվությունը հրապարակել իր կայքէջում ոչ ուշ, քան համապատասխան փոփոխության ուժի մեջ մտնելու օրվանից 3 (երեք) օր առաջ:

- 2.2. Կազմակերպիչն իրավունք ունի դադարեցնել համագործակցությունը ցանկացած Գործընկերոջ հետ՝ առանց նախապես տեղյակ պահելով Մասնակցին: Կազմակերպիչը պարտավորվում է տվյալ Գործընկերոջ հետ համագործակցությունը դադարեցնելու վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակել Կազմակերպչի կայքէջում ոչ ուշ, քան համագործակցության դադարեցման օրվանից երեք օր առաջ: Համագործակցությունը դադարեցրած Գործընկերոջ առևտրային և սպասարկման կետերում իրականացրած անկանխիկ գործարքների դիմաց Հետվճարներ չեն իրականացվում:
- 2.3. Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի դադարեցնելու գործունեությունը՝ այդ մասին երեք ամիս առաջ տեղեկացնելով Ծրագրի Մասնակիցներին www.baricard.am պաշտոնական կայքէջում տեղեկատվություն տեղադրելով:
- 2.4. Կազմակերպիչն իրավունք ունի միակողմանիորեն դադարացնել Մասնակցի մասնակցությունը Ծրագրին, եթե.
 - 2.4.1. Մասնակիցը խախտել է կամ չի հետևել Պայմանների կատարմանը:
 - 2.4.2. Մասնակիցը չարաշահում է Ծրագրով իրեն ընձեռած հնարավորությունները:
 - 2.4.3. Մասնակիցը տրամադրում է իրականությանը չհամապատասխանող, թյուր տեղեկատվություն՝ Կազմակերպչին, Գործընկերոջը կամ Բանկին:
 - 2.4.4. Բանկը դադարեցրել է Քարտի սպասարկումը կամ փակել է Քարտը՝ համաձայն «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ վճարային քարտերի սպասարկման պայմանների և օգտագործման կանոնների:
- 2.5. Մասնակիցը պարտավորվում է հետևել սույն պայմաններում նշված բոլոր կանոններին:
- 2.6. Մասնակիցը ևս իր հերթին իրավունք ունի դադարեցնել մասնակցությունը՝ ներկայացնելով քարտի փակման դիմում՝ համաձայն «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ վճարային քարտերի սպասարկման պայմանների և օգտագործման կանոնների, իսկ Այլ վճարային քարտերի քարտապան մասնակիցները՝ նաև Բանկի համար ընդունելի այլ եղանակով հայտնել Ծրագրի մասնակցությունից հրաժարվելու մասին:
- 2.7. Քարտի վավերականության ժամկետն ավարտվելու դեպքում դադարում է նաև ծրագրում մասնակցությունը, եթե Մասնակցի քարտը չի վերաթողարկվել «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ վճարային քարտերի սպասարկման պայմանների և օգտագործման կանոնների համաձայն կամ Մասնակիցը չի դիմել նոր քարտ ստանալու համար: Քարտի վերաթողարկման հիմքով վերականգնվում է նաև մասնակցության իրավունքը Ծրագրին:
- 2.8. Երրորդ անձի կողմից Վճարային քարտի անօրինական օգտագործման դեպքում Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Մասնակցի նկատմամբ:
- 2.9. Վճարային քարտի սպասարկման և օգտագործման դադարեցումն իրավասու է կատարել միայն Բանկը՝ համաձայն Բանկի կողմից սահմանած և հաստատած պայմանների:
- 2.10. Քարտի սպասարկումը դադարեցվելու դեպքում դադարեցվում է նաև հետվճարի իրականացումը:
- 2.11. Վճարային քարտը չի կարելի փոխանցել երրորդ անձի: Քարտը վավեր է Ծրագրի գործունեության ամբողջ ժամանակահատվածում, եթե այլ բան նախատեսված չէ ծրագրի շրջանակներում: Եթե քարտի վավերականության ժամկետը սպառվում է, Մասնակցի համար վերաթողարկվում է նոր քարտ և շարունակվում է մասնակցությունը ծրագրում: Քարտի թողարկման/վերաթողարկման պայմանները սահմանվում են Բանկի կողմից:
- 2.12. Մասնակիցը համաձայնվում է ստանալ առևտրային, ոչ առևտրային կամ այլ տեղեկատվություն՝ կապված Ծրագրի հետ՝ բջջային հաղորդագրության միջոցով,

նամակների տեսքով էլ-փոստին և հաղորդակցման այլ ճանապարհներով, որոնք նշվել են Մասնակցի կողմից վճարային քարտի ձեռք բերման ժամանակ:

2.13. Անձնական տվյալների կամ այլ տեղեկատվության փոփոխման դեպքում, Մասնակիցը պետք է հաղորդի դրա մասին Բանկին՝ զանգահարելով կամ անձամբ ներկայանալով Բանկ (եթե դա նախատեսված է Բանկի կողմից սահմանված քարտի սպասարկման պայմաններում):

3. ՀԵՏՎՃԱՐԻ (CASHBACK) ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ծրագրի Գործընկեր կազմակերպությունների առևտրային և սպասարկման կետերում Բանկի բոլոր քարտերով կատարված անկանխիկ վճարումները ենթակա են հետվճարի՝ համաձայն Ծրագրի պաշտոնական կայքէջում նշված չափերի: Հետվճար տրամադրող Գործընկեր կազմակերպությունների ցանկը և համապատասխան հետվճարի չափերի մասին տեղեկատվությունը հրապարակվում է Ծրագրի և Բանկի պաշտոնական կայքէջերում:

3.2 Հետվճար չի վճարվում հետևյալ դեպքերում՝

3.2.1 անկանխիկ վճարումով ձեռքբերված ապրանքը/ծառայությունը վերադարձվել է մինչև հետվճարի վճարման օրը ներառյալ,

3.2.2 քարտը և քարտապանի բոլոր հաշիվները Բանկում սույն պայմաններով սահմանված վճարման օրվա դրությամբ փակված են:

3.3 Տվյալ քարտի գծով կուտակված հետվճարի ենթակա գումարի վճարումն իրականացվում է ամսական պարբերականությամբ՝ մինչև գործարքի (վճարման) կատարման ամսվան հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը ներառյալ: Վճարումն իրականացվում է այն քարտի հաշվեհամարին, որով կատարվել է գործարքը: Այն դեպքում, երբ նշված հաշվեհամարը փակված է, հետվճարը փոխանցվում է քարտապանի այլ գործող հաշվեհամարի: Հետվճարի փոխանցման պահին գործող հաշիվ չլինելու դեպքում հետվճար չի տրամադրվում:

3.4 Հիմնական քարտերին տրամադրված կից քարտերով իրականացված գործարքները նույնպես ենթակա են Հետվճարի ստացման, սակայն հաշվարկված Հետվճարը փոխանցվում է հիմնական քարտին:

3.5 Բանկի արտարժութային քարտերով իրականացված գործարքների դեպքում հետվճարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով գործարքի գումարը ՀՀ դրամով՝ Բանկի վճարային քարտերի սպասարկման պայմաններով և օգտագործման կանոններով սահմանված փոխարժեքով, իսկ հետվճարի վճարումը արտարժութային քարտային հաշվին կատարվում է վճարման պահին Բանկի կողմից սահմանված արտարժույթի վաճառքի փոխարժեքով:

3.6 Վճարված հետվճարի մասին տեղեկատվությունը հասանելի է հաճախորդին տրամադրվող ամսական քաղվածում, ինչպես նաև ինտերնետ/մոբայլ բանկ համակարգերով գեներացվող քաղվածքներում:

3.7 Ծրագրի շրջանակներում փոխանցվող հետվճարները ենթակա են հարկման «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն: Հետվճարները Մասնակիցների

հաշիվներին փոխանցվում են եկամտային հարկը օրենքով սահմանված չափով գանձելուց հետո:

3.8 Հետվճարի ստացման համար Մասնակիցը պարտավոր չէ գործարք իրականացնելուց առաջ հաղորդել Գործընկերոջը, որ դա Ծրագրի շրջանակներում իրականացվող գործարք է: Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Հետվճարի վճարումը չիրականացնելու համար, եթե Մասնակիցը Գործընկերոջ մոտ չի վճարել Քարտով (այդ թվում նաև առցանց վճարում կատարելիս):

3.9 Հետվճարի ստացման համար հիմք է հանդիսանում Գործընկերոջ՝ վճարային տերմինալով իրականացրած անկանխիկ գործարքը, որտեղ նշված է գործարքի ամսաթիվն ու վճարած գումարի չափը: Խնդիրների դեպքում Մասնակիցը կարող է ներկայացնել Գործընկերոջ վճարային տերմինալով իրականացրած անկանխիկ գործարքը հավաստող կտրոնը (առցանց վճարման անդորրագիրը) կամ Բանկից ստացված Քարտով իրականացրած գործարքների քաղվածքը:

3.10 Մասնակցի կողմից գնված ապրանքի հետվերադարձի դեպքում Գործընկերը պարտավորվում է հետ վերադարձնել գումարը Մասնակցի քարտին, իսկ Բանկն իր հերթին գանձում է արդեն վճարած հետվճարի չափով գումար՝ տվյալ գործարքի մասով Հետվճարը վճարված լինելու դեպքում: Ապրանքի հետվերադարձի դեպքում իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենքով:

3.11 Վճարային քարտի օգտագործումը չի բացառում տվյալ Գործընկերոջ մոտ գործող զեղչերին մասնակցելը, եթե այլ պայմանավորվածություն ձեռք չի բերվել Կազմակերպչի և Գործընկերոջ միջև: Եթե առկա է որևէ պայմանավորվածություն, որի արդյունքում Հետվճար չի իրականացվելու, ապա Կազմակերպիչն այդ մասին տեղեկացնում է իր կայքէջում տեղակայված նյութերի միջոցով:

3.12 Հետվճար Մասնակցին կարող է չիրականացվել նաև այն դեպքերում, եթե Գործընկերոջ հետ հայտարարվում է ակցիա կամ միջոցառում Մասնակիցների համար հատուկ պայմաններով, որի մասին Մասնակիցը նախապես տեղեկանում է կայքէջի կամ հաղորդակցման այլ աղբյուրներից մեկի միջոցով:

4. ԱՆՁՆԱԿԱՆ և ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳԱՂՏԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Սույն Պայմաններն ընդունելով/ակցեպտավորելով՝ Bari Card-ի քարտապան Մասնակիցը համաձայնում է, որ Բանկը և Կազմակերպիչը միմյանց տրամադրեն քարտի հայտում ներառված անձնական տվյալները և Բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունները (առկայության դեպքում), ներառյալ Bari Card-ով կատարած գործարքները՝ սույն Պայմաններով սահմանված կարգով Ծրագրի իրականացումն ապահովելու համար:

4.2. Բանկի այլ վճարային քարտերի քարտապանների մասնակցությունը Բարի ծրագրում ապահովելու համար Մասնակիցը սույն պայմանների ակցեպտավորմամբ համաձայնում է, որ Բանկը և Կազմակերպիչը միմյանց տրամադրեն այդ քարտերով անկանխիկ գործարքների մասին տեղեկություններ՝ առանց բացահայտելու Քարտի կամ Մասնակցի անձնական տվյալները:

4.3. Մասնակիցը համաձայնվում է իր անձնական տվյալների գրանցմանը, մշակմանը և պահպանմանը Ծրագրի շրջանակներում: Այդ տվյալները Կազմակերպիչը պարտավոր է օգտագործել Ծրագրի իրականացման նպատակով Մասնակցին՝

Գործընկերների, Ծրագրի ակցիաների մասին և այլ տեղեկատվության տրամադրելու համար:

4.4. Մասնակիցը անձնական տվյալների փոփոխության դեպքում դրա մասին պետք է հայտնի Բանկին:

4.5. Ծրագրի իրականացման ընթացքում Կազմակերպչին հայտնի դարձած տեղեկատվությունը հանդիսանում է խիստ գաղտնի, բացառությամբ հրապարակային տեղեկատվության: Մասնակցի անձնական տվյալները առանց նրա գրավոր համաձայնության չեն կարող փոխանցվել երրորդ կողմի, բացառությամբ սույն Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

4.6. Պայմանագրի համաձայն՝ Կազմակերպիչը Մասնակցի մասին տեղեկությունները կարող է հրապարակել՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

4.7. Տեղեկատվության գաղտնիությունը պահպանվում է Կազմակերպչի կողմից սույն պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում:

4.8. Կազմակերպիչը պարտավորվում է կիրառել Անձնական տվյալների, բանկային գաղտնիքի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջները: Կազմակերպչի կողմից Մասնակցի անձնական տվյալների հետ իրականացվող բոլոր գործողությունները, ինչպիսիք են՝ տվյալների հավաքագրումը, գրանցումը, համակարգումը, պահպանումը, ձգարտումները (թարմացում և փոփոխում), առանձնացումը, օգտագործումն ու փոխանցումը, ապակտիվացումը, հեռացումը և ոչնչացումը, նախատեսված են սույն Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ:

4.9. Կազմակերպիչն ապահովում է այդ տվյալների պաշտպանությունը՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Մասնակիցը Ծրագրի շրջանակներում կարող է ստանալ նաև խրախուսական պարգևներ, ինչպես նաև մասնակցել ակցիաներին և այլ միջոցառումներին՝ նախապես ծանոթանալով դրանց պայմանների հետ Ծրագրի կամ Բանկի պաշտոնական կայքէջի կամ այլ գովազդային նյութերի միջոցով:

5.2. Ծրագրի Մասնակցին տրամադրվում է տեղեկատվություն Ծրագրի Գործընկերների վերաբերյալ, կամ գովազդային տեղեկատվական նյութեր՝ օգտագործելով այն բջջային հեռախոսահամարը կամ էլ. փոստի հասցեն, որոնք Մասնակիցը նշել է վճարային քարտը ձեռք բերելիս: Կարող են օգտագործվել տեղեկատվության փոխանցման այլ եղանակներ ևս՝ ըստ Կազմակերպչի հայեցողության:

5.3. Ծանուցումը Մասնակցին համարվում է իրականացված, եթե Մասնակիցն ստանում է դա նամակի տեսքով իր փոստին, էլ. փոստին, բջջային հաղորդագրությամբ կամ Կազմակերպչի կայքէջում և այլ հրապարակային տիրույթներում տեղադրման ճանապարհով:

5.4. Կազմակերպիչը կամ Գործընկերը իրավասու են փոփոխություններ մտցնել ծառայությունների ցանկի մեջ, որոնցից իրականացվում է հետվճարը՝ առանց նախապես Մասնակցին տեղեկացնելու:

5.5. Գործընկերը լիազորված չէ հանդես գալու հայտարարությամբ կամ երաշխավությամբ Կազմակերպչի անունից, բացի այն լիազորություններից, որոնք նախատեսված են սույն Պայմանագրով, այլ փաստաթղթերով, և համաձայնեցված են Կազմակերպչի հետ: Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում այն հայտարարությունների համար, որոնք հիմնավորված չեն Կազմակերպչի հետ համաձայնեցված փաստաթղթերով:

5.6. Գործընկերը պատասխանատվություն չի կրում հետվճարի չվճարման համար, եթե նա պատշաճ ձևով իրականացրել է վճարային քարտի սպասարկման գործընթացը՝ Մասնակցի կողմից ապրանք կամ ծառայություն ձեռք բերելիս:

5.7. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Գործընկերների կողմից Մասնակցին մատուցած Ծառայությունների որակի և երաշխիքային սպասարկման համար: Երաշխիքային սպասարկումը, ոչ պատշաճ որակով ապրանքի վերադարձն ու փոխանակումն իրականացվում է ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.8. Ծրագրի մասնակցության հետ կապված հարցերի դեպքում պետք է զանգահարել թեժ գծի հեռախոսահամարին՝ (+374 10) 50 25 11: Հուզող հարցերի պատասխանները Մասնակիցը կարող է ստանալ նույն օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ են լրացուցիչ պարզաբանումներ: Որոշ դեպքերում կարող է սահմանվել մինչև 30 օր ժամանակ:

5.9. Բարի ծրագրի գլխավոր գրասենյակի աշխատանքային ժամերն են երկ-ուրբ՝ 10:00 - 19:00 և շբթ՝ 13:00 - 17:00:

5.10. Քարտի սպասարկման և/կամ Քարտով կատարած գործարքների վերաբերյալ հարցերի դեպքում Մասնակիցը կարող է դիմել Բանկ՝ համաձայն «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ վճարային քարտերի սպասարկման և օգտագործման պայմանների կամ զանգահարել Բանկի միասնական տեղեկատվական ծառայություն՝ (+374 8000) 87 87: